ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# ԶԵԿՈՒՅՑ

## Հայաստանի Հանրապետության 2017 թ. խոշորացվող համայնքների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների

# ԱԽԹԱԼԱ

## համայնք

**(Ախթալա, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ բնակավայրեր)**

**Հեղինակ՝ Միեր Հակոբյան**

**Երևան – 2017**




# ԱԽԹԱԼԱ
## համայնքը՝ հպանցիկ

**Վարչական տարածքը՝** 5 822 հա

**Բնակչությունը՝** 6 836 մարդ

**Մարզը՝** Լոռի

**Համայնքի կենտրոնը՝** Ախթալա

**Բնակավայրերը՝** Ախթալա, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Լոռու մարզի Ախթալա խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 1 քաղաքային՝ Ախթալա (համայնքի կենտրոն), և 4 գյուղական բնակավայր՝ Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ:

### Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Լոռու մարզի հյուսիս-արևելյան հատվածում և մոտ են գտնվում Տավուշի մարզին: Բնակավայրերը գտնվում են լեռնային գոտում. ծովի մակերևույթից բարձրությունը տատանվում է 650-1250 մետրի սահմաններում: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **5 822** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Ճոճկանն է (1945 հա), ամենափոքրը՝ Նեղոցը (388 հա): Համայնքի կենտրոն Ախթալան այս չափանիշով 2-րդն է (1890 հա):

### Բնակչությունը

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **6 836** մարդ: Բնակչությամբ ամենամեծ բնակավայրը Ախթալան է (2788 մարդ), իսկ ամենափոքրը՝ Նեղոցը (337 մարդ): Համայնքում բնակչության խտությունը կազմում է 116.40 մարդ/կմ$^2$: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Շամլուղն է (172.07 մարդ/կմ$^2$), ամենանոսրը՝ Մեծ Այրումը (75.76 մարդ/կմ$^2$): Ախթալայում բնակչության խտությունը կազմում է 147.51 մարդ/կմ$^2$: Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Ախթալա խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

| № | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ) | Բնակչության խտություն (մարդ/կմ$^2$) |
|---|---|---|---|---|
| 1 | **Ախթալա** | 1890 | 2788 | 147.51 |
| 2 | Ճոճկան | 1945 | 1941 | 99.79 |
| 3 | Շամլուղ | 580 | 998 | 172.07 |
| 4 | Մեծ Այրում | 1019 | 772 | 75.76 |
| 5 | Նեղոց | 388 | 337 | 86.86 |
| | **Ընդամենը /միջինը/** | **5822** | **6 836** | **116.40** |

**Քարտեզ 1.** Ախթալա համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի




## Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը

Ախթալան մյուս բնակավայրերի համեմատ գտնվում է կենտրոնական դիրքում՝ Մ-6 միջպետական նշանակության ճանապարհի մոտ: Համայնքի կենտրոնին ամենամոտ տեղակայված բնակավայրը Նեղոցն է (5 կմ), ամենահեռուն՝ Ճոճկանը (12.6 կմ): Ախթալայից բոլոր բնակավայրերի միջին հեռավորությունը 8.6 կմ է, հասնելու համար պահանջվող միջին ժամանակը՝ 16.25 րոպե:

Ներհամայնքային տրանսպորտ չկա ոչ մի բնակավայրում, իսկ Նեղոցում չի գործում նաև միջհամայնքային հասարակական տրանսպորտ: Մյուս բնակավայրերից գործում է կանոնավոր (օրական մեկ կամ երկու անգամ հաճախականությամբ) երթուղի դեպի Ալավերդի, իսկ Ճոճկանից ու Մեծ Այրումից՝ նաև օրական մեկանգամյա հաճախականությամբ գործող երթուղի դեպի Երևան:

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2.** Ախթալա համայնքի տրանսպորտային կապերը

| Բնակավայր | Ներքին ճանապարհների երկարությունը (կմ) | Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ) | Հասնելու համար պահանջվող ժամանակ (րոպե) | Հեռավորությունը մոտակա մայրուղուց |
|---|---|---|---|---|
| **Ախթալա** | 40 | - | - | 3.5 |
| Ճոճկան | 7.5 | 12.6 | 20 | 5.5 |
| Մեծ Այրում | 12 | 8.2 | 14 | 6.2 |
| Նեղոց | 1.7 | 5 | 12 | 0 |
| Շամլուղ | 12 | 8.6 | 19 | 9.6 |
| **Միջինը** | **14.64** | **8.6** | **16.25** | **4.96** |

Բնակավայրերի ներքին ավտոճանապարհները հիմնականում խճապատ են՝ բացառությամբ Ախթալայի, որտեղ դրանք ասֆալտապատ են: Միջհամայնքային ճանապարհները Ախթալայում, Ճոճկանում և Մեծ Այրումում գտնվում են բավարար վիճակում: Շամլուղի ավտոճանապարհներն ընթացիկ, իսկ Նեղոցինը՝ հիմնանորոգման կարիք ունեն:

Ախթալայի հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից 64.9 կմ է:

### Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը

Համայնքի հինգ բնակավայրերից երկուսում ջրամատակարարումը կառավարվում է ՏԻՄ-ի կողմից, երկուսում՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի, իսկ Ճոճկանում բնակչությունը դեռևս օգտվում է աղբյուրների ջրից, սակայն նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը սկսել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից ցանցային ջրամատակարարումը: Ախթալայում և Նեղոցում ջրի խողովակաշարերը վերանորոգված են և գտնվում են բավարար վիճակում, մինչդեռ Մեծ Այրումում և Շամլուղում ջրագծերը խորհրդային տարիներից ի վեր չեն վերանորոգվել և հրատապ արդիականացման կարիք ունեն:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3.** Ախթալա համայնքում խմելու ջրի մատակարարումը

| Բնակավայր | Ջրամատակարարման կառավարողը | Ջրամատակարարման ժամակարգը | Սակագինը (1 մ$^3$) | Խողովակաշարի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| **Ախթալա** | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | բավարար |
| Ճոճկան | - | - | - | - |
| Մեծ Այրում[1] | ՏԻՄ | - | - | հիմնանորոգման կարիք |
| Նեղոց | «Վեոլիա ջուր» ՓԲԸ[2] | շուրջօրյա | 180 դր. | բավարար |
| Շամլուղ | ՏԻՄ | հիմնականում՝ շուրջօրյա | 300 դր.[3] | հիմնանորոգման կարիք |

[1] Մեծ Այրումում ամառվա ընթացքում խմելու ջուր չի լինում, իսկ մյուս եղանակներին՝ երկու օրը մեկ անգամ՝ մի քանի ժամով:

[2] Նեղոցում ջրագծին միացած են բնակավայրի տնային տնտեսությունների շուրջ կեսը, և ջրամատակարարման սակագինը տարածվում է միայն նրանց վրա: Մյուսները խմելու ջուրը բերում են մոտակա աղբյուրից:

[3] Շամլուղում ջրամատակարարման սակագինը գանձվում է մեկ անձի հաշվով:

Նեղոց և Շամլուղ բնակավայրերում ոռոգման համակարգեր չկան, իսկ Ճոճկանի ոռոգման համակարգը հիմնանորոգման կարիք ունի. կառուցվել է խորհրդային տարիներին, և մաշվածության պատճառով ցանցում ջրի կորուստները գերազանցում են 50%-ը: Ախթալայի և Մեծ Այրումի ոռոգման համակարգերը գտնվում են բավարար վիճակում, իսկ ջրի կորուստները քիչ են:

Աղբահանությունը Նեղոցում կատարվում է անհատական եղանակով, մյուս բնակավայրերում՝ կենտրոնացված: Ճոճկանում և Մեծ Այրումում աղբահանությունն իրականացվում է շաբաթական մեկանգամյա հաճախականությամբ, իսկ սակագին սահմանված չէ: Ախթալայում և Շամլուղում աղբահանության իրականացման հաճախականությունը շաբաթը 2-3 անգամ է: Բնակավայրերում տեղադրված են աղբամաններ՝ համապատասխանաբար 50 և 20 հատ: Աղբահանության սակագինը Ախթալայում 150, իսկ Շամլուղում՝ 40 դրամ է մեկ անձի հաշվով:

### Կրթական հաստատությունները

Համայնքում գործում է 12 կրթական հաստատություն, որոնցից 3-ը մանկապարտեզներ են, 1-ը՝ հիմնական, 5-ը՝ միջնակարգ, ևս 1-ը՝ գեղարվեստի դպրոցներ են (աղյուսակ 4): Համայնքում չեն գործում մարզադպրոցներ և երաժշտական դպրոցներ:

**Աղյուսակ 4.** Ախթալա համայնքում առկա կրթական հաստատությունները

| **Բնակավայր** | Մանկապարտեզ (հաճախողների քանակ) | Հիմնական դպրոց (հաճախողների քանակ) | Միջնակարգ դպրոց (հաճախողների քանակ) | Գեղարվեստի դպրոց (հաճախողների քանակ) |
|---|---|---|---|---|
| **Ախթալա** | 1 (30) | - | 1 (140) | 1 (50) |
| | 1 (30) | - | 1 (20) | |
| | 1 (15) | - | - | |
| Ճոճկան | 1 (60) | - | 1 (175) | - |
| Մեծ Այրում | 1 (45) | - | 1 (126) | - |
| Նեղոց | - | 1 (52) | - | - |
| Շամլուղ | - | - | 1 (120) | - |
| **Ընդամենը** | **5** | **1** | **5** | **1** |

Ախթալայի և Մեծ Այրումի մանկապարտեզները, ինչպես նաև Ախթալայի միջնակարգ դպրոցներից մեկն ու գեղարվեստի դպրոցը գտնվում են բավարար վիճակում: Ճոճկանի մանկապարտեզը, Նեղոցի հիմնական դպրոցը, ինչպես նաև Ախթալյի մյուս միջնակարգ դպրոցն ու Ճոճկանի միջնակարգ դպրոցն ունեն ընթացիկ, իսկ Մեծ Այրումի ու Շամլուղի միջնակարգ դպրոցները՝ հիմնանորոգման կարիք: Աշակերտների թվով ամենամեծը Ճոճկանի միջնակարգ դպրոցն է (175 աշակերտ), ամենափոքրը՝ Ախթալայի երկու միջնակարգ դպրոցներից մեկը (20 աշակերտ):

**Առողջապահական հաստատությունները**

Համայնք առողջապահական հաստատությունները ներառում են մեկ պոլիկլինիկա, մեկ բուժամբուլատորիա և երկու դեղատուն Ախթալայում, մեկական բուժկետ Մեծ Այրումում ու Նեղոցում և երկու բուժամբուլատորիա Շամլուղում: Մեծ Այրումի բուժկետն ու Շամլուղի բուժամբուլատորիաները հիմնանորոգման կարիք ունեն, իսկ մնացած հաստատություն- ները գտնվում են բավարար վիճակում:

**Մշակութային հաստատությունները**

Շամլուղում գործում է երկու, իսկ Ախթալայում, Ճոճկանում, Մեծ Այրումում՝ մեկական մշա- կույթի տուն՝ նախատեսված 100-300 անձի համար: Սակայն միայն Ախթալայինն է գտնվում բավարար վիճակում, մնացածը հիմնանորոգման կարիք ունեն: Ախթալայում գործում է նաև մեկ ակումբ՝ նախատեսված 250 անձի համար:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղա- բաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

**Քարտեզ 2.** Ախթալա համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը



**Համայնքի հիմնական կարիքները**

Բնակավայրերի ներկայացուցիչները կողմից առաջնահերթություններ են համարվում հետևյալները.

- Ախթալա՝ շենքերի տանիքների վերանորոգում, ինչպես նաև բնապահպանական հիմնախնդիրների լուծում՝ կապված լեռնահարստացման կոմբինատի աշխատանքի հետ:
- Ճոճկան՝ մշակույթի տան վերանորոգում և ոռոգման համակարգի արդիականացում:
- Մեծ Այրում՝ խմելու ջրի հիմնահարցի լուծում:
- Նեղոց՝ բնակավայրի գազաֆիկացում և ավտոճանապարհների վերանորոգում:
- Շամլուղ՝ մանկապարտեզի կառուցում, ջրագծի վերանորոգում, ավտոճանապարհների վերանորոգում և փողոցային լուսավորության ապահովում:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de